ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 Նոյեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

167
(3017)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԵՐԲ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԿՈՏՐԵԼ»-Ը «ՇԻՆԵԼ» Է ՀԱՍԿԱՆՈՒՄ

Ռուսական կողմը ուղիղ քայլեր է անում հայերի դեմ՝ պատժելով Հայաստանի իշխանություններին:

Հայաստանի իշխանությունները, երբ հակառուսական հայտարարություններ են անում, չեն մտածում, որ իրավիճակը ուղիղ համեմատական կերպով ազդելու է Ռուսաստանի Դաշնությունում բնակվող կամ այնտեղ մեկնող հայերի համար:

Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթն ահազանգ է ստացել, որ «ՌեդՎինգս» ավիաընկերությունը երեկ՝ Միներալնիե Վոդի-Երեւան թռիչքի ժամանակ, զգուշացրել է ուղեւորներին, որ դեկտեմբերի 1-ից հայ ուղեւորները դեպի Մոսկվա մեկնելիս ավելի խիստ կարգով են անցնելու ստուգումները: Նոյեմբերի 29-ի թռիչքի ժամանակ արդեն ուղեւորներին ծանուցել են թռիչքից 3 ժամ շուտ գալ օդանավակայան, որպեսզի ստուգումները խիստ կարգով անցկացնեն:

Ըստ երեւույթին, սա դիվանագիտական քայլ է՝ ՀՀ իշխանություններին խեղճացնելու համար: Իսկ պատճառը մեկն է՝ ՀԱՊԿ երկրների հանդիպմանը Նիկոլ Փաշինյանի ներկա չգտնվելը, հակառուսական հայտարարությունները եւ ՀԱՊԿ-ի հետ հարաբերությունները սառեցնելը:

Իսկ Մոսկվան գիտի Հայաստանին սթափեցնելու ուղիղ ճանապարհը. ազդել ՌԴ մեկնող եւ աշխատող քաղաքացիների վրա:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապվել «ՌեդՎինգս» ավիաընկերության հետ, սակայն որեւէ պատասխան չկարողացանք ստանալ:

ՔՊ-ում «ինքնամաքրման» գործընթաց է գնում: Նիկոլ Փաշինյանը ընտրություններից առաջ զտում է թիմը՝հույս ունենալով, որ սա կբարձրացնի ՔՊ-ի գահավիժող վարկանիշը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Նիկոլ Փաշինյանը ՔՊ վերնախավին հրահանգել է մաքրել թիմը եւ կուսակցությունից վտարել նրանց, ովքեր այս կամ այն կերպ սկանդալի կենտրոնում են հայտնվել, չեն ենթարկվում կանոններին ու վարկաբեկում են թիմը՝իրենց խոցելի դարձնելով: Ուստի ՔՊ-ականներից ոմանց համար ճամպրուկային տրամադրություններ են. սպասում են «վերեւների» հրահանգին: Ընդ որում, Փաշինյանի թիրախում են ինչպես շարքային ՔՊ-ականները՝այնպես էլ ՔՊ-ի էլիտայի անդամները: Ընդ որում, չի բացառվում, որ ոմանք, չսպասելով «շեֆի» հրահանգին, Գնել Սարգսյանի օրինակով «ինքնամաքրվեն» ՔՊ-ից: Թեեւ մյուս կողմից ՔՊ-ում խոսում են, որ Նիկոլ Փաշինյանի՝այսպես ասած օդիոզ (խիստ անցանկալի) դեմքերից ազատվելու պատճառը նաեւ այն է, որ քարոզչական դաշտում ՔՊ-ից պոկված արբանյակ կերպարները հանրային դաշտում հայհոյախառն դրսեւորումներ ցուցաբերեն՝ՔՊ-ն նրանց համար պատասխանատվություն չկրի:

Հաջորդ շաբաթ խորհրդարանը այս տարվա վերջին հերթական նստաշրջանը կհրավիրի: Դեկտեմբերի 3-ին մեկնարկող քառօրյայի ընթացքում ՔՊ-ականները պետք է ԲԴԽ անդամ ընտրեն, որի համար առաջադրել են ՔՊ-ական փաստաբան Ալեքսանդր Սիրունյանին, ով հայտնի է արցախատյաց եւ ընդդիմադիրների հասցեին ուղղված ոչ կոռեկտ գրառումներով: Իհարկե, «ժրաջան» ՔՊ-ականները հերթական նստաշրջանից հետո մտադիր չեն գնալ հանգստի. մինչեւ տարեմուտ դեռ արտահերթ նիստեր կանեն, օրենսդրական նոր նախաձեռնություններով հանդես կգան, կիսատ աշխատանքներն ավարտին կհասցնեն եւ նոր կմեկնեն ամանորյա արձակուրդի՝վայելելու պարգեւավճարները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝նախաքննական մարմինը, ի դեմս ՀՀ քննչական կոմիտեի, պատրաստվում է առաջիկայում գործողություններ իրականացնել ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝իշխանության յուրացման փորձի համար կալանքի տակ գտնվող Սերոբ Գասպարյանի մասով: Ինչպես հայտնի է, օրերս նրա կալանքի տակ գտնվելու ժամկետը երարաձգվեց մեկ ամսով: «Դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ թեեւ սույն փուլում շարունակում է առկա լինել հիմնավոր կասկած առ այն, որ Սերոբ Գասպարյանը, հնարավոր է, առնչություն ունի իրեն վերագրվող արարքի հետ, սակայն դատարանը փաստել է նաեւ, որ այս անգամ քննիչը չի ներկայացրել լրացուցիչ տեղեկություններ՝ Սերոբ Գասպարյանի արարքում իշխանությունը յուրացնելու նպատակի առկայության մասին: Ավելին՝ դատարանը նշել է, որ քննիչի կողմից ներկայացված լրացուցիչ փաստերը նվազեցրել են հիմնավոր կասկածի շեմը՝ միեւնույն ժամանակ արձանագրելով, որ ներկա փուլում Սերոբ Գասպարյանի հնարավոր առնչությունն իրեն մեղսագրված արարքին հավաստող տվյալները, առանց այլ տվյալներով ամրապնդման, գործի քննության հետագա փուլերում կարող են բավարար չլինել», - նշել էին նրա փաստաբանները: Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության կողմից տեղեկություններ են ստացվել մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին: ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ: Հարցաքննությունների արդյունքում՝ բավարար փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ քաղաքացիներ Ս.Գ.-ն, որը ԱԺ նախկին պատգամավորի եղբայրն է , Ա.Ե.-ն, Ա.Հ-ն, Ե.Ս.-ն, Ա.Ս-ն, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչներ Ա.Մ.-ն Ա.Ս.-ն, ինքնությունները դեռեւս չպարզաբանված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, կատարել են իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն, այն է՝ դիտավորությամբ ստեղծել են Հայաստանի Հանրապետության իշխանությունը զավթելու՝բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալու պայմաններ:

ԶՐՈՒՅՑ

# ԱՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ԱՌԱՋԻԿԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Socialmedia.am-ը զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:**

**-Պարոն Աղազարյան, երեկ ՔՊ նախաձեռնող խմբի նիստն էր, բայց կարծես, Դուք ներկա չէիք, ամեն դեպքում՝ տեսանյութում եւ լուսանկարներում չկայիք: Մասնակցե՞լ եք նիստին, եթե ոչ, ո՞րն է պատճառը:**

-Ես երեկ էլ եմ ներկա եղել՝ սկզբից մինչեւ վերջ:

**-Իսկ ելույթ ունեցե՞լ եք, կամ որեւէ հարց քննարկել ե՞ք:**

-Տեղս երեւում է, հա՛, փաստորեն: Նիստին ներկա եղել եմ, բայց հարցեր չեմ տվել:

**-Դուք մշտապես նիստերին ակտիվ եք եղել, հիմա ինչո՞ւ եք կաշկանդվել:**

-Հավատացնում եմ, որ էլի են եղել դեպքեր, որ հարցեր չեմ տվել, սա եզակի դեպք չէր, ուղղակի հարցեր չունեի: Ոչ թե կաշկանդվածությունն է պատճառը, այլ պարզապես հարցեր չունեի:

**-Պարոն Աղազարյան, Դուք ասում էիք՝ սպասում եք՝ Ձեր ընկերը Մոսկվայից գա, որ նրա հետ քննարկեք ու նոր Ձեր մանդատը վայր դնել-չդնելու հետ կապված որոշումը հայտնեք: Եկա՞վ Ձեր ընկերը:**

-Չէ, դեռ չի եկել:

**-Իսկ չի՞ ասել՝ երբ կգա:**

-Չէ, ասել է, որ հանկարծակի է գալու:

**-Իսկ ՔՊ խմբակցության պատգամավորները շարունակո՞ւմ են Ձեզ հետ հանդիպումներ ունենալ, քննարկել Ձեր մանդատի հարցը:**

-Չէ, հարցը չենք քննարկում: Գործընկերներ ենք, հանդիպում, զրուցում ենք, բայց մանդատի հարցը քննարկելու բան չկա, ես դա միայն Ալեն Սիմոնյանի հետ եմ քննարկել:

**-Նկատի ունենք՝ չե՞ն հետաքրքրվում ձեր թիմակիցները՝ երբ է Ձեր ընկերը գալու, երբ եք Ձեր որոշման մասին հայտնելու:**

-Հետաքրքիր կլիներ նայել Ձեր աչքերին, երբ հարցը տալիս եք:

**-Ինչո՞ւ:**

-Հետաքրքրիր կլիներ ուղղակի նայել՝ ի՞նչ չարաճճիություն կա Ձեր աչքերի խորքում:

**-Պարոն Աղազարյան, մենք գիտենք, որ Ձեր թիմակիցները հաճախ են Ձեզ հանդիմանում, որ չպետք է դեմ դուրս գայիք Նիկոլ Փաշինյանին, պետք է Նարեկ Ջեյնալյանի նման մանդատը վայր դնեիք եւ հեռանայիք: Նման քննարկում եղե՞լ է:**

-Ոչ, խմբակցության մակարդակով նման քննարկում չի եղել:

**-Գուցե Դուք ներկա չեք եղել, Ձեր ներկայությամբ չե՞ն քննարկել մանդատի հարցը:**

-Ոչ:

**-Այսինքն, Դուք բնականոն շարունակում եք Ձեր գործունեությունն ԱԺ-ում:**

-Այո:

Հիշեցնենք, որ Հովիկ Աղազարյանը օրեր առաջ լրագրողների հետ զրույցում հայտարարել է, թե մանդատը վայր դնելու կամ չդնելու որոշում կայացնելու համար սպասում է Մոսկվայից ընկերոջ վերադարձին:

«Ես հեռախոսազանգ եմ ստացել Մոսկվայից, իմ մանկական, դպրոցական, ուսանողական ընկերոջ կողմից, որ ինքը շատ կնեղանա ինձնից, եթե արձագանքեմ վարչապետի հրապարակավ խնդրանքին առանց իրեն տեսնելու: Հիմա ես սպասում եմ իր գալուն»,- ասել է Աղազարյանը:

ԼՈՒՐԵՐ

## ԳՅՈՒՄՐԻՆ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Գյումրիում մեկնարկել են նախնական ընտրությունները, կամ այսպես ասած՝ փրայմերիզը, որոնց արդյունքներով որոշվելու է քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածուն:

ՔՊ-ականները Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից հետո սկսել են ինքնաառաջադրվել ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման համար:

Ինքնաառաջադրումների վերջնաժամկետը դեկտեմբերի 2-ն է, իսկ թեկնածուների վերջնական ցուցակը կհրապարակվի դեկտեմբերի 3-ին:

Կարող են ինքնաառաջադրվել ՔՊ անդամ, համակիր կամ համախոհ հանդիսացող անձինք:

Թեկնածուների գրանցումը եւ ընտրությունների ողջ գործընթացը կիրականացնի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունը:

Գյումրիի փրայմերիզին մտադիր են առաջադրվել նախկին փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանը, ով վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի ազգականն է, ՔՊ խմբակցության պատգամավոր Դավիթ Առուշանյանը ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարել է, որ հակված է առաջադրվել, բայց իր վերջնա-

կան որոշման մասին կհայտնի քննարկումներից հետո: ՔՊ-ական Կարեն Սարուխանյանը, ում թեկնածությունը ՔՊ-ն թմրանյութի թեստի սկանդալից հետո մերժեց, ArmLur.am-ի հետ զրույցում նշեց՝ դեռ որոշում չունի՝ կմասնակցի ԺՊ-ի ընտրություններին:

Նշենք, որ ընտրված ԺՊ-ն արդեն համայնքապետի ընտրություններում լինելու է ՔՊ-ի թեկնածուն:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ՄՈՍԿՎԱՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՇՓՈՒՄՆԵՐ

Մոսկվան ակնկալում է ամենաբարձր մակարդակով արդյունավետ շփումներ ունենալ Երեւանի հետ՝ առաջիկայում Մոսկվայում կայանալիք Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) եւ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում անցկացվող միջոցառումների ընթացքում:

Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով Ռուսաստանի Դաշնության փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինի՝ «Ռուսաստան-Հայաստան» երկրորդ հանրային ֆորումի ժամանակ արված հայտարարությունը:

«Մենք ակնկալում ենք արդյունավետ շփումներ մեր ղեկավարների միջեւ ԵԱՏՄ-ի եւ ԱՊՀ-ի առաջիկա իրադարձությունների շրջանակներում»,- ասել է ՌԴ փոխարտգործնախարարը:

Միխայիլ Գալուզինի խոսքով՝ չնայած հայտնի խնդրահարույց հարցերին՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ շարունակվում է ռիթմիկ, բազմակողմ երկխոսությունը:

## ՄՀԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՈՒ ՅԱՂՈՒԲ ԷՅՈՒԲՈՎԸ ԶՐՈՒՅՑԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն, ով Մոսկվայում մասնակցում է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) տնտեսական խորհրդի 104-րդ նիստին, միջոցառման ընդմիջմանը կարճատեւ զրույց է ունեցել Ադրբեջանի փոխվարչապետ Յաղուբ Էյուբովի հետ:

Այս մասին հայտնում է ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը:

Հաղորդվում է, որ փոխվարչապետների զրույցը տեւել է ավելի քան 10 րոպե:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՄՆ-ՈՒՄ

Պաշտոնական այցով երեւանյան պատվիրակության կազմում Լոս Անջելեսում գտնվող Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը հանդիպել է Գլենդելի քաղաքապետ Էլեն Ասատրյանի հետ:

## ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԲ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարգադրություն է ստորագրել.

«Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով՝ կարգադրում եմ.

1. Կազմակերպել 2024 թվականի նոյեմբերի 27-30-ը Հայաստանի Հանրապետություն ժամանող՝ Ղազախստանի Հանրապետության Մաժլիսի Ղազախստան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Մուկաշ ՋՈՒԼԿԱՐՆԱԵՎԻՉԻ գլխավորած պատվիրակության ընդունելությունը:

2. Ազգային ժողովի Հայաստան-Ղազախստան բարեկամական խմբի ղեկավար, Ազգային ժողովի պատգամավոր Վաղարշակ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝ ընդունել պատվիրակությանը:

3. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ՝ պատվիրակության ընդունելությունը կազմակերպել Ազգային ժողովի նախագահի 2018 թվականի հունվարի 25-ի «Ներկայացուցչական ծախսերի իրականացման եւ հուշանվերների տրամադրման կարգի մասին» Կ-22-Ա կարգադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին»:

# ԻՐԱՎԻՃԱԿ

## ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանով Արցախում ռուսական խաղաղապահ միավորման նախկին հրամանատար, գեներալ-գնդապետ Ռուստամ Մուրադովը նշանակվել է ՌԴ ցամաքային զորքերի հրամանատարի առաջին տեղակալ: Այս մասին հայտնում է ՌԴ նախագահի մամուլի ծառայությունը: Հիշեցնենք, որ 2020 թ-ի աղետալի պատերազմից ու Արցախի մասնակի օկուպացիայից հետո Մուրադովն այնտեղ տեղակայվող ռուսական խաղաղապահ զորքերի առաջին հրամանատարն էր:

## ՀՈՒՅՍ ՈՒՆԻ, ՈՐ ԹՐԱՄՓԸ ԿՎԵՐԱՆԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը հույս է հայտնել, որ իր իրավահաջորդը՝ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը, կվերանայի Չինաստանից, Կանադայից եւ Մեքսիկայից ապրանքների ներմուծման մաքսատուրքեր սահմանելու իր որոշումը: Ամերիկացի առաջնորդի խոսքերը մեջբերում են Սպիտակ տան մամուլի լրագրողները: «Հուսով եմ, որ նա կփոխի իր միտքը: Կարծում եմ, որ դա հակառդյունավետ է: Մենք շրջապատված ենք Խաղաղ եւ Ատլանտյան օվկիանոսներով եւ երկու դաշնակիցներով՝ Մեքսիկայով եւ Կանադայով: Վերջին բանը, որ մենք ցանկանում ենք, սկսել փչացնել այդ հարաբերությունները»,- ասել է Բայդենը:

## ՍՈՂԱՆՔՆԵՐԸ 27 ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔ ԵՆ ԽԼԵԼ

Առնվազն 27 մարդ է զոհվել Ինդոնեզիայի Հյուսիսային Սումատրա նահանգում սողանքների պատճառով, անհետ կորածների որոնումները շարունակվում են: Այս մասին հայտնում է Reuters գործակալությունը՝ հղում անելով Արտակարգ իրավիճակների կառավարման ազգային գործակալությանը: «Մեր ուժերը կենտրոնացած են անհայտ կորածների որոնումների եւ սողանքների հետեւանքով վնասված ճանապարհների մաքրման վրա», - գործակալությանը հայտնել է գերատեսչության ներկայացուցիչը:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրախորհրդարանը բանաձեւ է ընդունել, որում մերժում է Վրաստանում վերջին խորհրդարանական ընտրությունների արդյունքները եւ կոչ է անում դրանք կրկնել: Ստրասբուրգում Եվրախորհրդարանի լիագումար նիստում այդ բանաձեւն ընդունվել է 444 կողմ, 72 դեմ, 82 ձեռնպահ ձայներով: Երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված քվեարկության արդյունքները «չի ծառայում որպես վրաց ժողովրդի կամքի հուսալի արտացոլում», ասել են եվրոպացի պատգամավորները:

Ուստի, ասվում է փաստաթղթում, Եվրախորհրդարանը մերժում է Վրաստանում խորհրդարանական ընտրությունների ցանկացած ճանաչում եւ անհրաժեշտ է համարում դրանք «կկրկնել մեկ տարվա ընթացքում՝ միջազգային մանրակրկիտ վերահսկողության ներքո» եւ անցկացնել անկախ ընտրական վարչակազմով: Եվրախորհրդարանը կոչ է արել ԵՄ-ին պատժամիջոցներ կիրառել Վրաստանի վարչապետի եւ բարձրաստիճան պաշտոնյաների դեմ:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳԵՐԼԱՐՎԱԾ Է

# ԱՐՑՈՒՆՔԱԲԵՐ ԳԱԶ, ՋՐՑԱՆ ՄԵՔԵՆԱ՝ ՑՈՒՅՑԸ ՑՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**Եվրախորհրդարանի կողմից Վրաստանի ընտրությունների արդյունքների ճանաչումից հետո իրավիճակն ավելի է լարվել:**



Այս բանաձեւը կոչ է անում նաեւ մեկ տարվա ընթացքում նոր ընտրություններ անցկացնել: Այս հայտարարությանը հաջորդեց Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի հայտարարությունը. «Վրաստանը մինչեւ 2028 թ. հրաժարվում է ԵՄ-ին անդամակցելու շուրջ բանակցություններից: Հրաժարվում ենք նաեւ ԵՄ բյուջեից եւ ցանկացած դրամաշնորհից»:

Իրավիճակը դարձավ գերլարված, երբ Վրաստանի խորհրդարանի մոտ հավաքվում էին մարդիկ: Նրանք սպասում էին նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի արտակարգ հայտարարությանը:

Հանրահավաքի մեկնարկին Վրաստանի նախագահին, անդրադառնալով Վրաստանի վարչապետի խոսքերին, ասաց. «Այսօր այս ոչ լեգիտիմ իշխանությունը պատերազմ հայտարարեց իր ժողովրդին, նրա անցյալին ու ապագային: Այս ճանապարհին չկա Վրաստանի պետական ինքնիշխանությունը, անկախությունը եւ այլ ապագա, բացի Ռուսաստանից»:

Վրաստանի խորհրդարանի շենքի մոտ ցուցարարների թիվն աստիճանաբար մինչ ուշ գիշեր ավելանում էր:

Զուրաբիշվիլին մոտեցել է Ազատության հրապարակ տանող ճանապարհը փակած ուժայիններին եւ հարցրել՝ «Ո՞ւմ եք ծառայում»:

Հանրահավաքի մասնակիցներին վախեցնելու համար Վրաստանի հրապարակ բերվեցին ջրցան մեքենաներ: Ապա գիշերը Թբիլիսիում սկսեցին բախումներ ոստիկանության ուժերի եւ հանրահավաքի մասնակիցների միջեւ: Ակցիան ցրելու ոստիկանության գործողությունների արդյունքում բազմաթիվ մարդիկ բերման են ենթարկվել եւ վնասվածքներ ստացել:

Բախումների ընթացքում Ռուսթավելի պողոտան մարտադաշտի էր վերածվել: Օգտագործվել է արցունքաբեր գազ, գործի են դրվել ջրցան մեքենաները եւ սկսվել է մասսայական ձերբակալություններ:

Թբիլիսիում խորհրդարանի շենքի մոտ տեղի ունեցած ցույցերի ժամանակ տուժել է ՆԳՆ 32 աշխատակից, ձերբակալվել՝ 43 ցուցարար:

Արդյունքում Թբիլիսիում հատուկջոկատայինները ցրել են ընդդիմության ցույցը՝ հատուկ ճնշումներ կիրառելով:

Հիշեցնենք, որ իրավիճակը Վրաստանում լարվեց խորհրդարանական ընտրություններից հետո: Վրաստանում խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել հոկտեմբերի 26-ին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարել է իշխող «Վրացական երազանք» կուսակցության՝ շուրջ 54 տոկոս արդյունքով հաղթանակի մասին: Ընդդիմությունը չի համաձայնել քվեարկության արդյունքների հետ, եւ հինգ տոկոսանոց շեմը հաղթահարած չորս ընդդիմադիր կուսակցություն հայտարարել է նոր խորհրդարանի աշխատանքը բոյկոտելու մասին: Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին նույնպես հրաժարվել է ճանաչել պաշտոնական արդյունքները՝ Ռուսաստանին մեղադրելով ընտրություններին միջամտելու մեջ:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԴԻՐՔԵՐՈՒՄ Է

ԵԿՄ վարչության նախագահ Սասուն Միքայելյանը ԵԿՄ գումարտակների մարտական դիրքերի հենակետեր ստուգայցեր է անցկացրել:

Մարտական հերթապահություն իրականացնող ԵԿՄ-ականները վստահեցրել են՝ մարտական հենակետում ծառայությունն անցնում է անփորձանք, բարոյահոգեբանական վիճակն «ուժեղ-կայուն» է:

«Ցանկացած պահի պատրաստ ենք հակառակորդի հերն անիծել»,- նշել է հենակետի ավագը:

## ՇՐՋԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՄԱՏՈՒՑՎԵՆ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու, քաղաքացիներին մատուցվող ծառայություններն առավել հասանելի դարձնելու, ինչպես նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումների ընդունմանն աջակցելու նպատակով դեկտեմբերի 4-ից 6-ը շրջիկ ձեւաչափով ծառայություններ կմատուցվեն Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում:

Օրակարգը հետեւյալն է.

դեկտեմբերի 4-ին՝ ժամը 15.00-18.00, Քաջարանի համայնքապետարանում՝ (Լեռնագործների փող., 4 շենք),

դեկտեմբերի 5-ին՝ ժամը 10.00-12.00, Սյունիքի մարզի Տաշտուն բնակավայրում,

դեկտեմբերի 5-ին՝ ժամը 14.00-16.00, Սյունիքի մարզի Գեղի բնակավայրում,

դեկտեմբերի 6-ին՝ ժամը 11.00-15.00, Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանում (Շահումյան փող, 1 շենք):

## ՆՈՐ ԳՐԱՖԻԿ ԿԳՈՐԾԻ

Երեւանի քաղաքապետարանը հայտնում է, որ ձմռան ամիսներին հնարավոր անհարմարավետություններից խուսափելու եւ մարդկանց տեղաշարժն ավելի հարմարավետ դարձնելու նպատակով այժմ «Երքաղլույս» ՓԲԸ-ն ցանցը սպասարկում է հետեւյալ ժամանակացույցով՝

Քաղաքի արտաքին լուսավորությունը միացվում է ժամը 18:00-ին եւ առանձին փողոցների դեպքում միացված է մնում մինչեւ 04:00-ն:

Սեփական խնայողությունների հաշվին, այժմ արդեն ցանցը գործարկվում է նաեւ առավոտյան արեւածագից առաջ՝ 1 ժամով՝ չկրճատելով գիշերային ռեժիմի լուսավորության տեւողությունը:

## ՄՈՍԿՎԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ. ԶԱԽԱՐՈՎԱ

Կապանում ՌԴ գլխավոր հյուպատոսության բացման հետ կապված իրավիճակը չի փոխվել: Այս մասին ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք բազմիցս մեկնաբանել ենք այդ հարցը, ցավոք, իրավիճակը չի փոխվել: Հայկական կողմը համաձայնություն է տվել հյուպատոսություն բացելու վերաբերյալ, որից հետո ռուսական կողմը էկզեկվատուրա է խնդրել, սպասում ենք պատասխանի: Թե որն է համապատասխան նյութեր չուղարկելու պատճառը, հարցն ուղղեք Երեւանին»,- նշել է Մարիա Զախարովան:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

# ՈՎ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՆԴԱՊԵՏԸ

**Երեկ ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտոնապես հայտնեց, որ հիմք ընդունելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունները՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է հրամանագրեր, որոնց համաձայն՝ գնդապետ Լեւոն Դավիդյանը նշանակվել է հատուկ նշանակության ուժերի հրամանատար:**

Սակայն այս պատմության մեջ ամենաուշագրավն այն է, որ 3 տարի առաջ գնդապետ Լեւոն Դավիդյանը միացել էր ՋՈՒ պաշտոնյաների հայտարարությանը եւ պահանջում էր Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, իսկ ահա այսօր Նիկոլ Փաշինյանի առաջարկությամբ նոր պաշտոն է ստանում գնդապետ Լեւոն Դավիդյանը՝ նշանակվելով հատուկ նշանակության ուժերի հրամանատար:

2021 թվականին Հայաստանի Զինված ուժերի գլխավոր շտաբը հայտարարություն է տարածել, որում պահանջում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ կառավարության հրաժարականը:

«ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբն իր վճռական բողոքն է արտահայտում անհեռատես եւ չհիմնավորված պատճառներով ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալին պաշտոնից ազատման առնչությամբ, որն իրականացվել է առանց Հայաստանի Հանրապետության ազգային եւ պետական շահերը հաշվի առնելու՝ հիմնվելով միայն անձնական եւ հավակնոտ զգացմունքների վրա: Երկրի համար այսպիսի ծանր պայմաններում նման որոշումը հակապետական եւ անպատասխանատու քայլ է:

ՀՀ վարչապետը եւ կառավարությունն այլեւս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային եւ ճակատագրական իրավիճակում:

ՀՀ զինված ուժերը երկար ժամանակ համբերատար կերպով հանդուրժում էր գործող իշխանության կողմից զինված ուժերը վարկաբեկելուն ուղղված «գրոհները», սակայն ամեն ինչ ունի իր սահմանները:

ՀՀ զինված ուժերը պատվով է կատարել իր պարտքը, իր ժողովրդի հետ ուսուսի մարտնչել թշնամու դեմ:

Գործող իշխանությունների անարդյունավետ կառավարումը եւ արտաքին քաղաքականությունում ցուցաբերած լրջագույն սխալները երկիրը հասցրել են կործանման եզրին:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ՀՀ զինված ուժերը պահանջում են ՀՀ վարչապետի եւ կառավարության հրաժարականը, միաժամանակ նախազգուշացնում՝ ձեռնպահ մնալ ժողովրդի դեմ ուժ կիրառելուց, ում զավակները զոհվել են՝ պաշտպանելով Հայրենիքն ու Արցախը: Բանակը միշտ եղել է ժողովրդի հետ, ինչպես ժողովուրդն է բանակի հետ»,- ասված է ՋՈՒ ԳՇ հայտարարության մեջ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՎԱՐՈՐԴԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՅՐԱԾ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԿԱԼԱՆՔԻ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Երեւանի փոխքաղաքապետի վարորդին պատկանող մեքենաները այրելու գործով ձերբակալված տղամարդուն մեղադրանք է առաջադրվել եւ խափանման միջոց ընտրելու համար միջնորդություն է ներկայացվել դատարան:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահ համակարգում կասկածելի է այն հանգամանքը, որ Երեւանի փոխքաղաքապետի վարորդի անվամբ հաշվառված «Lexus» մակնիշի ավտոմեքենաները, որոնք այրել են, հենց նրան են պատկանում: Չի բացառվում, որ փոխքաղաքապետի վարորդին փաստացի պատկանող մեքենաները այրելով՝ կոնկրետ անձիք Արմեն Փամբուխչյանին են փորձել բան հասկացնել, ինչը, օրինակ, եղավ ՔՊ-ական Հայկ Սարգսյանի ընտանիքին պատկանող խանութի տարածքում պայթյուն իրականացնելով:

Ավելին՝ քիչ առաջ «Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ կա նախաձեռնված քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով: Մեկ անձ, հանցավոր արարքը կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալված է: Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք,որ Նոյեմբերի 24-ին առեղծվածային դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Հրդեհ էր բռնկվել Նոր Արեշ 44 փողոցի տներից մեկի առաջին հարկում գտնվող ավտոտնակում, որտեղ կայանված 2 «Lexus» մակնիշի ավտոմեքենաներից մեկը ամբողջությամբ այրվել էր, մյուսն էլ դարձել ոչ շահագործելի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հրդեհված «Lexus»-ները Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի վարորդի անունով են եղել:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 27-28-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 92 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված: Մասնավորապես, բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման՝ 20, տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝14, խարդախության՝7, ֆիզիկական ներգործության՝6, մարմնական վնասվածք պատճառելու՝ 5, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու՝ 4, հոգեկան ներգործության, խուլիգանության, թմրանյութի իրացման ու փաստաթուղթ կեղծելու՝ 3-ական, վստահված գույքի հափշտակման, շորթման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու եւ զենք-զինամթերքի առգրավման՝ 2-ական, անձնական ունեցվածքի գողության, համակարգչային հափշտակության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր պատրաստելու, ձեւափոխելու կամ նորոգելու, դատական ակտը չկատարելու, ինքնիրավչության, դատարանի որոշման պահանջները խախտելու, սառը զենքի հայտնաբերման ու 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու՝ 1-ական դեպք: Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 2, բնակարանային գողության՝1 դեպք:

Հայտնաբերվել է 8 հետախուզվող:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 3 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 21 պատահար. 28 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեն բացահայտել է իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպք:

«2024 թվականի նոյեմբերի 24-ին Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդ փողոցում կայանված Վազ 21214 մակնիշի ավտոմեքենայի կողքին կպչուն ժապավենով փաթեթներ նկատելու հանգամանքով պայմանավորված, ապօրինի թմրամիջոց պահելու եւ իրացնելու կասկածանքով, պարեկային ծառայողների կողմից ՆԳՆ ոստիկանության Նուբարաշենի բաժին են տեղափոխվել նշված տրանսպորտային միջոցի վարորդը եւ ուղեւորը: Վերջիններս իրավապահներին հայտնել են իրենց կողմից շահագործվող ավտոմեքենայում եւս թմրանյութերի առկայության մասին:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով:

Իրականացված անհրաժեշտ միջոցառումներով պարզվել է ոստիկանության բաժին տեղափոխված հիշյալ անձանց ինքնությունը: Վերջիններս, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել են եւ հարցաքննվել:

Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել է գետնին նետված ընդհանուր թվով 12 փաթեթ, իսկ Վազ 21214 մակնիշի ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է կպչուն ժապավեններով փաթեթավորված ընդհանուր 25 մանր փաթեթ:

Հայտնաբերված զանգվածների քաշը եւ բաղադրությունը պարզելու նպատակով նշանակվել է դատաքիմիական եւ դատաբուսաբանական համալիր փորձաքննություն:

Փորձագետի եզրակացության համաձայն՝փաթեթներից վերցված նմուշը հանդիսանում է «Մեֆեդրոն» տեսակի թմրամիջոց:

Ձերբակալվածների անձնական խուզարկությամբ հայտնաբերված բջջային հեռախոսում կատարվել է թվային խուզարկություն, որի արդյունքում պարզվել է, որ Արին-Բերդ փողոցի տարբեր հատվածներում բջջային հեռախոսով կատարվել է 11 տեղանքի լուսանկարում, որոնց վրա գրված են եղել կոորդինատներ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա վերոհիշյալ անձանց նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, եւ նրանց մեղադրանք է ներկայացվել:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթայում հնարավոր այլ անձանց առկայությունը, ինչպես նաեւ՝ թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը պարզելու ուղղությամբ: Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 110 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐՔ

### ՌՈՒՍՆԵՐԸ ՔԱՆԴԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՍԱՐՔԱԾ ՋՈՐԱՆՈՑՆԵՐԸ

ՌԴ զինուժը Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի վարչական տարածքում, միջպետական ավտոճանապարհի եզրին հավաքովի կոնստրուկցիաներով զորանոցի շենք էին սարքել, կողքին էլ հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող երկթեւանի, տուֆակերտ խաչքար տեղադրել: Նման շենք, նույնպես հավաքովի կոնստուկցիաներով, ռուսական զինուժը սարքել էր նաեւ Բերդ համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղում՝ խորհրդային ժամանակ այդտեղ գործած փոքր օդանավակայանի տարածքում: Ոսկեպարից ու Այգեպարից տեղեկացանք, որ ռուսները քանդել են այդ գյուղերում կառուցված շենքերը, քանդված կոնստրուկցիաները դեռեւս նույն տեղերում են գտնվում պահակների հսկողության ներքո: Ռուսական զինուժը Ոսկեպարում էր գտնվում 2021թ. օգոստոսի 2-ից: Տեղեկություն կար, որ ռուսական կողմը փորձել էր Հայաստանի Հանրապետությանը վաճառել Ոսկեպարում գտնվող զորանոցի շենքը: Սակայն գործարքը չէր կայացել, քանի որ Հայաստանը ռուսների նշած գինը զորանոցի համար թանկ էր համարել: Այդպես էլ պաշտոնապես չհայտնվեց, թե ինչ նպատակով էին կառուցվել այդ շենքերը, ենթադրվում է, որ դրանք ծառայելու էին հայ-ադրբեջանական սահմանազատմանը մասնակցելիք ռուս զինվորականների կեցության համար:

### ԴԻԼԻՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ 3702 ԾԱՌ ԵՆ ՀԱՏԵԼ

Դիլիջանի ազգային պարկը բնության հատուկ պահպանվող տարածք է: Ազգային պարկի տարածքներում, բարձրավոլտ էլեկտրական հոսանքի հենասյուների տակ գտնվող հատվածներում 2023 թվականին զանգվածային ծառահատումներ են արել: Հոկտեմբերի 21-ին այդ մասին տեղեկատվական հարցում ենք արել շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին: Նախարարության պատասխանում նշված է. «Ի պատասխան Ձեր՝2024 թվականի հոկտեմբերի 21-ի հարցման՝ հայտնում եմ, որ համաձայն 2023 թվականի հունիսի 12-ի շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջեւ կնքված «Էլեկտրահաղորդման համակարգի» անխափան գործունեությանն ու անտառուղիներում հրդեհավտանգ վիճակի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացման մասին» N ԲԷՑ-3-2023 պայմանագրի՝ 2023 թվականին իրականացվել է էլեկտրահաղորդման օդային գծերի NN 132-151 հենամեջերում հաշվառված 3702 ծառի հատման եւ դրանից առաջացած 1055.42 խմ ծավալով փայտանյութի մթերում: Մթերումը կազմակերպվել է ներքին պահեստից (1խմ=21.600 ՀՀ դրամ արժեքով): 2024 թվականին պայմանագրի շրջանակում շինափայտի եւ վառելափայտի հատումներ չեն իրականացվել»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ

### ԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՆԻ՞ 2025-Ը ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՅՍԵՐԻ ՀԱՄԱՐ

**2025 թվականին մասնավորապես սպասվում է անձնական աճի, կարիերայի եւ ֆինանսների զարգացում:**

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ի՞նչ է սպասվում անհատապես կենդանակերպի նշաններին:

Այսպիսով, այսօր հերթը առյուծներինն ու կույսերինն է:

Սկսենք առյուծներից, որոնք եւս կրակի տարերք են: 2-րդ դարի աստղագետ Պտղոմեոսի նկարագրած 48 համաստեղություններից մեկն է: Առյուծները սովորաբար առաջնորդ են, մեծահոգի, սեփական արժանապատվության զգացումով, համառ: Առաջին տպավորությունից ինքնավստահ են, կասկածամիտ: Նրանք մտահոգված են իրենց արտաքինով: Առատաձեռն են իրենց սիրելիների նկատմամբ, սիրում են նվերներ տալ եւ զվարճանալ: Չեն ներում վիրավորանքը, հատկապես երբ մերժում են ստանում: Վատ են գլուխ հանում մարդկանցից: Առյուծներին կարելի է գրավել կեղծավորությամբ եւ գովասանքով: Հավակնոտ են ու ագրեսիվ: Կարողանում են սիրել եւ լինել սիրված: Բացասական հատկանիշը՝ մեծամտություն:

Իսկ ի՞նչ է սպասվում առյուծներին գալիք 2025 թվականին:

Առյուծների համար եկող տարին լինելու է փոփոխությունների, աճի եւ ինքնարտահայտման տարի:

Առյուծների համար տարվա առաջին կեսը խոստանում է մասնագիտական առաջխաղացում եւ ճանաչում: Նոր աշխատանքային առաջարկները, առաջխաղացումն ու հաջողությունը առյուծների նպատակներում հնարավոր են մայիսից առաջ՝ Յուպիտերի բարենպաստ դիրքի շնորհիվ: Տարվա երկրորդ կեսը կբերի ֆինանսական կայունություն եւ նույնիսկ բիզնես ընդլայնում նրանց համար, ովքեր աշխատում են իրենց նախագծերի վրա: Սակայն խորհուրդ է տրվում խուսափել ռիսկային ներդրումներից եւ լավ պլանավորել ծախսերը:

2025 թվականին առյուծների անձնական կյանքը կլինի կայուն, բայց ոչ առանձնապես ռոմանտիկ: Ամուսնացած առյուծները կզգան հարաբերությունների նոր խորությունը, չնայած նրան, որ հնարավոր է հուզական կապի բացակայություն: Միայնակ առյուծները կարող են հանդիպել նոր մարդկանց, սակայն նախկին փորձառությունները կարող են դժվար դարձնել վստահելը: Ռոմանտիկ հարաբերությունների մեջ գտնվողները կունենան ուրախ եւ լիարժեք տարի եւ հնարավոր է, որ հարաբերություններում նոր քայլեր լինեն:

Առողջական առումով տարին հնարավոր է շատ խառը լինի: Մարսի ազդեցությունը հնարավոր է, որ կուժեղանա ֆիզիկական տոկունությունը, սակայն Սատուրնի բացասական ազդեցությունը, հատկապես տարեսկզբին, կարող է բերել հոգնածություն կամ այլ առողջական խնդիրներ: Կարեւոր կլինի կյանքի առողջ ռեժիմը:

Անցնենք կույսերին:

Կույսերը հողի տարերք են եւ առաջին տպավորությունը նրանց մասին հիմնականում վառ չի լինում: Հաճախ ամաչում են անծանոթների ներկայությունից, զրույցներում ոչ միշտ են վարողի դերում լինում: Ջգայուն են, ճշտապահ, կարգապահ, գրավիչ եւ շատ հուսալի: Մարդկանցից հիասթափվում են կատարելագործման ձգտման պատճառով: Բնորոշ է՝ մշտական աճն ու կատարելագործման ձգտումը: Բարի ընկերներ են, երբեք հուսախաբ չեն անի: Կույսերը պրագմատիկ են, նրանց գրավում է այն ամենը, ինչ կանաչ է, չեն հետաքրքրվում գաղափարներով եւ տեսություններով: Բացասական կողմերը՝ չափից ավելի զգուշավորություն, կեղծ բարեպաշտություն:

Իսկ ի՞նչ է սպասվում կույսերին 2025 թվականին:

Այն կլինի փոփոխությունների, հաջողությունների եւ ինքնազարգացման տարի:

2025 թվականի ընթացքում կույսերի համար կլինեն նոր ծանոթությունների եւ կապերի տարի:

Վեներայի ազդեցությունը կմեծացնի կույսերի գրավչությունը եւ կաջակցի նոր հարաբերությունների ձեւավորմանը:

Յուպիտերն ու Վեներան աջակցում են հարաբերությունների կայունացմանը, սակայն Մերկուրիի հետընթացների (մարտ, հուլիս, նոյեմբեր) ընթացքում կարեւոր է խուսափել շփման խնդիրներից՝ համբերատարությամբ մոտենալով իրավիճակին:

Տարին խոստանում է մասնագիտական աճ: Յուպիտերը կաջակցի առաջխաղացմանը, իսկ Սատուրնը կհորդորի հետեւողական աշխատանք: Ապրիլից հուլիս ընկած ժամանակահատվածում կարող են հայտնվել նոր հնարավորություններ, իսկ հունիսին ծագած մարտահրավերները պահանջելու են նորարար մոտեցում:

Տարվա երկրորդ կեսին ֆինանսական վիճակը կբարելավվի: Վեներայի ազդեցությունը կօգնի եկամուտների եւ խնայողությունների կառավարմանը, բայց խորհուրդ է տրվում խուսափել շտապ որոշումներից:

Առողջությունը կայուն կլինի, բայց կարեւոր է կանխարգելիչ խնամքը տարվա սկզբին: Սատուրնը եւ Յուպիտերը կաջակցեն առողջ ապրելակերպին, իսկ մայիսն ու հունիսը կլինեն լավագույն ամիսները ֆիզիկական պատրաստվածությունը բարելավելու համար:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

## ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ ՍՊԱՍՎՈՒՄ ԵՆ ՋԵՐՄԱՅԻՆ ՌԵԿՈՐԴՆԵՐ

**Ստիսակ ծովից մինչեւ Ամուրի ափեր տարածվում է ռեկորդային ջերմություն: Այս մասին հայտնում է «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Ազիզյանը:**

ՊՈԱԿԻ տնօրենը հայտնում է, որ օրացուցային ձմռան սկսվելուց երկու օր առաջ ռեկորդային ջերմությունը պատել է Ռուսաստանի տարածքի նկատելի հատվածը: Անցած չորեքշաբթի օդի առավելագույն ջերմաստիճանի օրական երեք տասնյակից ավելի ռեկորդներ են գրանցվել:

Ռուսաստանի հյուսիսային մասում եւ Հեռավոր Արեւելքում ռեկորդային շոգերի երկրորդ օրն է: Երեքշաբթի օրը նոր ռեկորդային ցուցանիշներ են գրանցվել Մուրմանսկի եւ Արխանգելսկի մարզերում, Յամալո-Նենեցյան ինքնավար շրջանում եւ Կրասնոյարսկի երկրամասում, Յակուտիայում եւ Պրիմորիեում:

Ջերմության աղբյուրը դանդաղ շարժվում է դեպի արեւելք, եւ այսօր ու վաղը հնարավոր են ջերմային նոր ռեկորդներ Եվրոպական Ռուսաստանի հյուսիս-արեւելքում, Արեւմտյան Սիբիրի հյուսիսում, Արեւելյան Սիբիրում եւ Հեռավոր Արեւելքում: Ամենաէական ջերմաստիճանային անոմալիա՝ մինչեւ 12-15, սպասվում է Սախայի Հանրապետությունում:

*Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

# Է.ՅՀ-Է.Ս-ԲԻ-ՍԻ-Ն ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԸ ԱՎԱՐՏԻՆ Է ՀԱՍՑՎԵԼ

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն հայտարարում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (HSBC Հայաստան) 100% բաժնեմասի ձեռքբերման գործընթացի ավարտի մասին: Գործարքի վերջնականացման եւ ինտեգրացիայի մոտ տասն ամիս տեւած աշխատանքներից հետո HSBC Հայաստանը ս.թ. նոյեմբերի 29-ին վերանվանվել է «Արդշինինվեստբանկ»: Բանկը ս.թ. դեկտեմբերի 2-ից արդեն պաշտոնապես կդիմավորի HSBC Հայաստանի հաճախորդներին՝ պայմանների եւ ծառայությունների պահպանմամբ, ինչպես նաեւ բազմաթիվ արտոնությունների ավելացմամբ:

«Այս գործընթացը նշանակալի է Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի համար, քանի որ այն ընդգծում է հայկական կապիտալով անկախ բանկի կայունությունն ու վստահելիությունը: Մենք լիահույս ենք, որ Արդշինբանկի խմբի հաճախորդները կզգան ուժեղ եւ վստահ, իսկ նախկին HSBC Հայաստանի աշխատակիցները կշարունակեն իրենց կարիերան զարգացնել Արդշինբանկի հետ՝հիմնված կայունության եւ լավագույն փորձի փոխանակման սկզբունքների վրա»,- ասել է Արդշինբանկի վարչության նախագահ Արտակ Անանյանը:

Հիշեցնենք, որ ս.թ. փետրվարի 6-ից մեկնարկած գործընթացն իրականացվել է հաշվետվողականության եւ շահառուների հետ աշխատանքների թափանցիկ հաղորդակցության սկզբունքներով: ՀՀ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը թույլատրել էր համակենտրոնացումը, ընդգծելով, որ այն չի հանգեցնում մրցակցության սահմանափակման եւ սպառողների շահերի վնասման: ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը նախնական համաձայնություն էր տվել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կանոնադրական հիմնադրամում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից նշանակալից մասնակցության ձեռքբերմանը: Այսպիսով, գործարքի ավարտն արձանագրվում է համակարգերի եւ տվյալների բազաների տեղափոխմամբ եւ ինտեգրմամբ:

HSBC Հայաստանը Արդշինբանկի խմբում ընդգրկելու գործարքի համար ընտրվել է նվազագույն փոփոխություններով անցում ապահովելու ռազմավարությունը. այս որոշումը կայացվել է նախեւառաջ հաճախորդների հարմարությունն ապահովելու համար: Փոփոխություններից հետո էլ HSBC Հայաստանի հաճախորդները կշարունակեն սպասարկվել նույն մասնաճյուղերում եւ նույն անձնակազմի կողմից: Նոր բրենդավորմամբ բանկային քարտերի ակտիվացման ուղեցույցներն արդեն տրամադրվել են հաճախորդներին. հաշիվները պահպանվել են, իսկ քարտերը վերափոխվել են նախկին բանկոմատային քարտերից՝լիարժեք դեբիտ քարտերի: Հաճախորդները հնարավորություն ունեն օգտվելու նոր մոբայլ բանկինգի հավելվածից, որի մուտքանունները եւս պահպանվել են. անհրաժեշտ է միայն փոխել գաղտնաբառը եւ ակտիվացնել համակարգը՝առանց բանկ այցելելու: Յուրաքանչյուր հարցում անհատական մոտեցմամբ ու ուշադրությամբ՝բանկը հոգ է տանում հաճախորդների հարմարավետ անցումն ապահովելու մասին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՄՈՒՐԱՆՈ ԿՂԶՈՒՄ

# AKNEYE-Ի ԵՎ ՍԱՇԱ ՋԱՖՐԻԻ «ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԱՉՔԵՐՈՎ»

**Ս.թ. նոյեմբերի 23-ին Վենետիկի AKNEYE ֆիջիթալ սփեյսը փակեց իր դռները՝ նշանավորելով Բիենալեի ընթացքում AKNEYE-ի ճանապարհորդության ավարտը: Վեց ամիսների ընթացքում 31 արվեստագետ աշխարհի տարբեր անկյուններից միավորվել էին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ՝ ցուցադրելով ոչ միայն անհատական, այլեւ հավաքական ստեղծագործության ուժը:**

Փակման արարողությանը ներկա էին բազմաթիվ նշանավոր հյուրեր, արվեստասերներ, համադրողներ եւ կոլեկցիոներներ՝ տոնելու AKNEYE-ի հանձնառությունը՝ խթանելու նորարարությունն ու ստեղծագործությունը ֆիզիկական եւ թվային արվեստի խաչմերուկում: Միջոցառման ժամանակ տեղի է ունեցել արվեստագետ Ջեյնեփ Չիլեք Չիմենի արվեստի կենդանի ցուցադրությունը, ինչին հետեւել է գալա ընթրիքը խորհրդանշական Մուրանո կղզում:

Ընթրիքը հատկանշական էր նրանով, որ կայացավ է AKNEYE-ի թերեւս ամենայուրահատուկ գործակցությունը բրիտանացի հայտնի նկարիչ Սաշա Ջաֆրիի հետ: Ինչպես համաճարակի ժամանակ արվեստագետն ստեղծել էր Գինեսի ռեկորդների գրքում տեղ գտած աշխարհում ամենամեծ կտավը, այնպես էլ փակման միջոցառման օրը հյուրերի աչքի առաջ նկարել է ամենամեծ ակնի վրա: Ներկաներին հիացրել է այդ բացառիկ եւ ինտերակտիվ կատարումը, որը լավագույն կերպով փոխանցվել է նրանց ամբողջ երեկոյի ընթացքում: «Through the Eye of the Artist» գեղարվեստական ուղին ավելին է, քան պարզապես համագործակցությունը: Սա անցյալի եւ ապագայի միաձուլումն է, մարդկության վերամիավորման եւ արվեստի ավանդական սահմանները հատող նորարարության ապացույցը:

Հրավիրվածների թվում էին AKNEYE-ի ստեղծման գաղափարակիր Անահիտ Բադալյանը, ֆասթեքսի համահիմնադիր Վիգեն Բադալյանը, ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը, ՀՀ ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը, Կա՛ Ֆոսկարիի համալսարանի Արվեստի պատմության դասախոս եւ համադրող Սիլվիա Բուրինին, Սաշա Ջաֆրիի Ստուդիոյի տնօրեն Ֆալգունի Ուիդոնը եւ այլք: Արվեստագետի ինքնատիպ ցուցադրությանը հետեւելուն զուգընթաց՝ նրանք վայելեցին 100 տարի առաջ Բիենալեի բացման արարողությունից հետո կազմակերպված տոնական ընթրիքի ճաշացանկից ոգեշնչված ուտեստները, որի պատճենը մեզ է հասել ընթրիքին մասնակցած հայ անվանի նկարիչ Մարտիրոս Սարյանի շնորհիվ: Այդ ճաշացանկի նմանօրինակ ուտեստները պատրաստել էր Միշլենի աստղ ունեցող շեֆ-խոհարար Տինո Վետտորելոն: Խոհարարի, համահիմնադրի եւ պատվավոր հյուրերի ստորագրություններով ճաշացանկերը դառնալու են NFT եւ հանվեն վաճառքի:

Երեկոյի տպավորությունների մասին խոսել է ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը. «AKNEYE-ը նորարարական հարթակ է նորաստեղծ եւ կայացած արվեստագետների համար: Երբ մի քանի ամիս առաջ ծանոթացա ծրագրին, վստահ էի, որ պիտի հետաքրքիր ճանապարհ անցնի, եւ այդպես էլ եղավ: Այս վեց ամիսների ընթացքում 30-ից ավելի արտիստներ մասնակցեցին ծրագրին եւ կարողացան ինքնաբացահայտվել եւ բացահայտվել հասարակության համար: AKNEYE-ի ծրագիրը միջավայր է, որը կապում է արվեստը, մշակույթը, նորարարությունը, ժամանակակից տեխնոլոգիաները, վիրտուալը, NFT-ն եւ բնականաբար բիզնեսը: Շատ կարեւոր եմ համարում, որ այս ծրագիրը կարողացավ հայ եւ միջազգային արվեստագետներին միավորել իր շուրջը եւ նոր հնարավորություններ տալ՝ զարգանալու»:

«Այսօր մենք ունեցանք հիանալի երեկո. Սաշան ստեղծեց իր անհավանական AKNEYE-ը: Սաշայի աշխատանքի ֆիզիկական բնույթը՝ զուգակցված AKNEYE-ի եւ Fastex-ի թվային բնույթի հետ, շատ հետաքրքիր համագործակցություն է բոլորիս համար: Այս երեկո մենք տեսանք, թե ինչպես Սաշան Դուբայի իր արվեստանոցից կենդանի կատարմամբ ստեղծեց իր ֆիզիկական AKNEYE քանդակը՝ ներկաներին հաղորդելով անհերեւակայելի մեծ փորձառություն Վենետիկի բիենալեի վերջին շաբաթվա ընթացքում: Տպավորիչ էր: Շնորհակալություն», - նշել է Սաշա Ջաֆրիի Ստուդիոյի տնօրեն Ֆալգունի Ուիդոնը:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիջիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

## «ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ ՀԱՄԵՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է

**Օրերս Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունեցել «Ռեինկարնացիա» խմբի համերգը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ: Դասականի եւ ժամանակակից արվեստի միաձուլման՝ «Սիմֆոնիկ Ռեինկարնացիա» միջոցառման գլխավոր հովանավորը ֆասթ Բանկն էր:**

Տարիներ առաջ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի եւ «Ռեինկարնացիա օրկեստրայի» մենակատար Ռոլանդ Գասպարյանի հանդիպման արդյունքում ծնվել է «Սիմֆոնիկ Ռեինկարնացիա» համերգի միտքը: Համատեղ համերգի նշանառություններից մեկը սիմֆոնիկ երաժշտությունը հասանելի դարձնելն է բազմաթիվ երիտասարդների, որոնք, գալով այս համերգին, հետագայում կգան նաեւ նվագախմբի դասական համերգներին:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն Սարգիս Բալբաբյանն ասել է. «Այսպիսի նախագծերն անհնար է իրականացնել առանց հովանավորների: Հովանավորների դերն այստեղ կայանում է նրանում, որ մենք կարողանում ենք նախագծերը ներկայացնել այնպիսի բարձր որակով, որ կարողանանք ստանալ այն շոուն, որ մենք պատկերացնում ենք: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ֆասթ Բանկին, ում աջակցությամբ տեղի է ունենում այս համերգը»:

Ֆասթ Բանկը, որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, բազմիցս նման նախագծերի կողքին է եղել եւ շարունակելու է աջակցել Հայաստանում մշակութային իրադարձությունների իրականացմանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: Ֆասթ բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

10 ԱՆՎԱՆԱԿԱՐԳ

# ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԴԵԼՓՅԱՆ ԽԱՂԵՐԻՑ

**Ռուսաստանի Դաշնության Կոմի Հանրապետության Սիկտիվկար քաղաքում անցկացվել են 3-րդ երիտասարդական բաց Արկտիկական եւ ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերը՝ 10 անվանակարգերում:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ Հայկական ազգային Դելփյան կոմիտեի (ՀԱԴԿ) մասնագիտական ընտրությամբ խաղերին մասնակցել է նաեւ ՀՀ պատվիրակությունը՝ 6 մասնակցով՝ դաշնամուր, ջութակ, ժողովրդական նվագարաններ եւ կերպարվեստ անվանակարգերում: ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված են նաեւ Հայկական ազգային Դելփյան կոմիտեի (ՀԱԴԿ) նախագահ Ալեքսան Ջաքյանն ու 2 նվագակցող:

Հայաստանի ներկայացուցիչները 3-րդ երիտասարդական բաց Արկտիկական Դելփյան խաղերում նվաճել են 2 ոսկե եւ 2 արծաթե մեդալներ, ինչպես նաեւ 2 դիպլոմ, իսկ ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերում Հայաստանն ունեցել է երեք 1-ին եւ մեկ 2-րդ մրցանակակիրներ:

ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերի թիմային հաշվարկով ՀՀ պատվիրակությունը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը:

Ներկայացնում ենք Հայաստանի՝ մրցանակային տեղեր զբաղեցրած ներկայացուցիչներին՝

Դաշնամուր անվանակարգ (10-13 տարեկան)

Էդուարդ Սիմոնյան, դաս.՝ Լ. Մկրտչյան - արծաթե մեդալ եւ առաջին մրցանակ

Դաշնամուր անվանակարգ (14-17 տարեկան)

Էլեն Խաչիկյան, դաս.՝ Մ. Մարգարյան - ոսկե մեդալ եւ առաջին մրցանակ

Ջութակ անվանակարգ (14-17 տարեկան)

Էդուարդ Դայան, դաս.՝ Է. Թադեւոսյան - - ոսկե մեդալ եւ առաջին մրցանակ

Ժողովրդական նվագարաններ (18-25 տարեկան)

Լիլիթ Պետրոսյան, դաս.՝ Ծ. Հովհաննիսյան - արծաթե մեդալ եւ երկրորդ մրցանակ

Ժողովրդական նվագարաններ (14-17 տարեկան)

Նարեկ Խանզադյան, դաս.՝ Գ. Դաբաղյան - Դիպլոմ

Կերպարվեստ (14-17 տարեկան)

Գոհար Գրիգորյան - Դիպլոմ

Խաղերին մասնակցել են շուրջ 600 տաղանդավոր պատանիներ եւ երիտասարդներ 13 պետություններից՝ ԱՊՀ անդամ պետություններից, ինչպես նաեւ ԲՐԻԿՍ-ի եւ ՇՀԿ-ի ներկայացուցիչներ: Հանդես են եկել Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ադրբեջանի, Չինաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Իրանի եւ Բենինի պատվիրակությունները:

3-րդ երիտասարդական բաց Արկտիկական Դելփյան խաղերի ընթացքում կազմակերպվել է նաեւ միջազգային կոնֆերանս, որի շրջանակում ՀԱԴԿ նախագահ Ալեքսան Ջաքյանը հանդես է եկել զեկույցով, իսկ ՇՀԿ շրջանակում կազմակերպված «Մշակույթը, որպես հարթակ բազմակողմանի համագործակցության եւ զարգացման համար» կլոր սեղանին ներկայացրել է «Միացյալ ազգերը հանուն խաղաղության նվագախումբ եւ երգչախումբ» ծրագիրը:

## «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**Euromoney միջազգային առաջատար ֆինանսական ռարբերականն Ամերիաբանկին շնորհել է «Անշարժ գույքի ձեռքբերման լավագույն բանկը Հայաստանում» մրցանակ: Ամերիաբանկն առաջինն է Հայաստանում արժանացել այս մրցանակին:**

Մրցանակը շնորհվել է առեւտրային նշանակության անշարժ գույքի ոլորտում գրանցած գերազանց արդյունքների համար՝ գնահատելով Բանկի ոչ միայն ֆինանսական հաջողությունները եւ հաճախորդների սպասարկման բարձր որակը, այլեւ առաջադեմ տեխնոլոգիական լուծումների եւ կայուն զարգացման ոլորտում իրականացվող նախաձեռնությունների միջոցով ոլորտը զարգացնելու հանձնառությունը:

Ըստ Euromoney-ի, Ամերիաբանկը 2023թ. հունիսից մինչեւ 2024թ. հունիսն ընկած ժամանակահատվածում զգալի աճ է գրանցել Հայաստանում անշարժ գույքի ձեռքբերման առումով: Բանկի հիփոթեքային վարկերի պորտֆելն աճել է 25.3%-ով եւ կազմել 233.2 մլրդ ՀՀ դրամ (600 մլն ԱՄՆ դոլար), իսկ հիփոթեքային վարկերի շուկայում բանկի մասնաբաժինը կազմել է 21.3% (30.06.2024 դրությամբ):

Պարբերականը նշում է, որ բանկի գրանցած հաջողությունը սերտորեն կապված է իր էկոհամակարգի՝ MyHome-ի գործունեության հետ, որն օգտատերերին առաջարկում է անշարժ գույք գնելու ամբողջական օնլայն լուծում՝ տան ընտրությունից մինչեւ հիփոթեքային վարկավորման հաստատում: Հաճախորդները միայն պետք է այցելեն նոտարական գրասենյակ՝ պայմանագրի վավերացման համար:

Դիտարկվող ժամանակահատվածում հարթակի միջոցով տրամադրվել է ավելի քան 18 մլրդ ՀՀ դրամի վարկ, որը կազմում է Ամերիաբանկի կողմից առաջնային շուկայում անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկերի պորտֆելի 50%-ը, ինչը 38.3%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

Euromoney-ն ընդգծում է, որ հարթակը զգալիորեն ընդլայնվել է. MyHoշe-ում ներկայացված կառուցապատողների թիվը հարթակի գործարկման պահին գրանցված 25-ից 2024թ. կեսերին հասել է 68-ի, ընդ որում մարզերում գործունեություն ծավալող կառուցապատողների թիվն աճել է 172%-ով: Առաջարկվող անշարժ գույքերի թիվն աճել է 226%-ով. 2024թ. հունիսին հարթակում արդեն ներկայացված էր 3,100 բնակարան 115 շենքում: Հավելենք, որ հարթակի նոր գործառույթը թույլ է տալիս ընտրել եւ ձեռք բերել անշարժ գույք նաեւ երկրորդային շուկայից, ինչի շնորհիվ առաջարկվող բնակարանների թիվը նույն ժամանակահատվածում ավելացել է 950-ով:

Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրեն Արման Բարսեղյանը, խոսելով մրցանակաբաշխության արդյունքների մասին, նշել է. «Ամերիաբանկը շարունակաբար մշակում է նորարարական լուծումներ, որոնք բարելավում են մեր հաճախորդների եւ գործընկերների՝ թվային պրոդուկտների օգտագործման փորձառությունը: MyHome.am հարթակի հաջողությունն արտացոլում է համապարփակ էկոհամակարգ ստեղծելու մեր հանձնառությունը, ինչը պարզեցնում է բնակելի անշարժ գույք գնելու գործընթացը եւ խթանում անշարժ գույքի շուկայի աճը Հայաստանում: Այս մրցանակը մեծ պատիվ է մեզ համար, եւ մենք շնորհակալ ենք մրցանակաբաշխության ժյուրիին մեր աշխատանքն ու ջանքերը գնահատելու համար»:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Նոյեմբերի 28-ին ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման վարկանիշային թարմացված աղյուսակը:

Հայաստանի ազգային հավաքականը նահանջել է մեկ հորիզոնականով եւ այժմ զբաղեցնում է 100-րդ տեղը: Հոկտեմբերի 24-ին հրապարակված վարկանիշում մեր ընտրանին 99-րդն էր:

Արգենտինայի ընտրանին պահպանել է առաջատարի դիրքը: Լավագույն եռյակում են նաեւ Ֆրանսիայի եւ Իսպանիայի հավաքականները:

## ԽԱՂԸ ՈՉ–ՈՔԻ Է ԱՎԱՐՏՎԵԼ

Կանանց Հայաստանի ազգային հավաքականը նոյեմբերի 28-ին Մոլդովայի Վադուլ Լուի Վոդա քաղաքում կայացած ընկերական խաղում ոչ-ոքի է խաղացել դաշտի տերերի՝ Մոլդովայի ընտրանու հետ: Այս մասին հայտնում է ՀՖՖ պաշտոնական կայքը:

Մեր հավաքականի կազմում հանդիպման հաշիվը 34-րդ րոպեին բացել է Լառա Կազանչյան, իսկ տանտերերից հանդիպման հիմնական ժամանակի ավարտից 14 րոպե առաջ պատասխանել է Վերոնիկա Կոժուհարին՝ 1:1:

Կանանց Հայաստանի ազգային հավաքականը եւս մեկ ընկերական խաղ կանցկացնի Մոլդովայի ընտրանու հետ արդեն դեկտեմբերի 1-ին:

## ՊՍԺ–Ն ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂԱՆԱ ՀԱՅՏՆՎԵԼ ԹՈՓ–8–ՈՒՄ

Ֆրանսիական «Պարի Սեն Ժերմենը» Չեմպիոնների լիգայի ընդհանուր փուլի արդյունքներով չի կարողանա դուրս գալ 1/8 եզրափակիչ, եզրակացրել է Opta վիճակագրական պորտալը:

Աղբյուրի համաձայն՝ ՊՍԺ-ի՝ լավագույն ութնյակում հայտնվելու շանսերը զրոյական են, իսկ փլեյ-օֆֆ փուլ դուրս գալը՝ 9-ից 24-րդ տեղերը զբաղեցնելը, կազմում է 55%:

Չեմպիոնների լիգայի ընդհանուր փուլի 5-րդ տուրի խաղում ՊՍԺ-ն նվազագույն հաշվով պարտվել էր Մյունխենի «Բավարիային»:

Հինգ խաղից հետո ՊՍԺ-ն Չեմպիոնների լիգայի մրցաշարային աղյուսակում չորս միավորով զբաղեցնում է 26-րդ տեղը: Ֆրանսիական ակումբը ութերորդ տեղից հետ է մնում յոթ միավորով: Փարիզցիներին սպասվում են հանդիպումներ «Ռեդ Բուլ Զալցբուրգի», «Մանչեսթեր Սիթիի» եւ «Շտուտգարտի» հետ:

● *Նոյեմբերի 29-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Օրնիֆլ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:**

*Վազգեն Սաֆարյան (38 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

*Հայաստանի Հանրապետության*
*քաղաքացիական ծառայության խորհուրդ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:**

*Գրետա Հարությունյան (71 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

*Կենսաթոշակային*
*համակարգի իրազեկման կենտրոն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



«Բերդ» պարային անսամբլը համերգային շրջագայությամբ Ֆրանսիայում է: Անսամբլի ելույթները մի առանձնակի ջերմությամբ ու ոգեւորությամբ են ընդունվում հանդիսատեսի կողմից՝ հայկական մշակույթի տարածման ու հանրահռչակման յուրահատուկ գործոն դառնալով:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | -5 - 9<br>-1 + 2 |
| Կոտայքի լեռներ | -6 - 8<br>-1 +1 |
| Կոտայքի նախալեռներ | -3 - 5<br>+3 + 5 |
| Գեղարքունիք | -7 - 11<br>- 2 + 1 |
| Լոռի | - 4 - 8<br>+1 + 4 |
| Տավուշ | 0 - 4<br>+3 + 6 |
| Արագածոտնի լեռներ | - 6 - 9<br>0 - 2 |
| Արագածոտնի նախալեռներ | -1 - 4<br>+ 4 + 7 |

| | |
|---|---|
| Արարատ | 0 - 4<br>+6 + 8 |
| Արմավիր | -1 - 5<br>+ 5 + 7 |
| Վայոց ձորի լեռներ | -6 - 10<br>0 - 2 |
| Վայոց ձորի նախալեռներ | -1 + 2<br>+12 + 14 |
| Սյունիքի հովիտներ | 0 + 3<br>+ 8 + 10 |
| Սյունիքի նախալեռներ | - 4 - 8<br>- 1 + 4 |
| ԼՂՀ | - 3 - 7<br>0 + 6 |
| Երեւան | 0 - 2<br>+ 2 + 4 |

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.11.2024**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*